

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ՊԱՐՏԻԶԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Հայկ Տերոյանը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 18.01.2017 թ. թիվ 7 որոշմամբ

Պարտիզակ 2017թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Համայնքում իրականացվելու է այնպիսի համայնքային քաղաքականություն, որի շնորհիվ հետևողականորեն կբարելավվեն համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, կընդլայնվեն համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների շրջանակները և կբարձրացվի դրանց հասանելիությունն ու մատչելիությունը, դրա համար կստեղծվեն նպաստավոր պայմաններ: Կյանքի են կոչվելու պատշաճ կառավարման սկզբունքները: Հատկապես շեշտը դրվելու է տեղական ժողովրդավարության ամրապնդման, հիմնախնդիրներին արձագանքելու պատրաստակամության, հրապարակայնության և թափանցիկության, անբասիր վարքի ապահովման, հստակ ֆինանսական կառավարման, սոցիալական միասնության ապահովման, բնակչությանը իրազեկման, որոշումների կայացմանը բնակիչների մասնակցության ապահովման և հաշվետվողականության բարձրացման մեխանիզմների ներդրմանը և հետևողականորեն դրանց իրականացմանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Պարտիզակ համայնքի տեսլականն է՝

Հետևողական բարեփոխումների շնորհիվ համայնքը դարձնել բարեկարգ և բարեկեցիկ բնակավայր, բարելավ ապագայի հասնելու համար բարձրացնել կրթության, մշակութային մակարդակը, զարգացնել գյուղատնտեսությունը, ավանդական մշակաբույսերի մշակություն, անասնապահություն, գյուղական ապրանքների վերամշակումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Հնգամյա ժամկետում բարեփոխումներ կատարելով նախատեսվում է համայնքում հասնել հետևյալ հիմնական նպատակներին՝

Համայնքային կենտրոնի կառուցում:

- Համայնքային կենտրոնի կառուցում:
- Կրթական և մշակութային ոլորտի բարելավում և կրթօջախի բարեկարգում:
- Բուսաբուծության և անասնապահության զարգացում:
- Գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման կազմակերպում, ջերմոցային տնտեսության հիմնում:
- Համայնքային ծառայությունների մատուցման բարելավում:
- Համայնքի բնակչության մշակութային կյանքի, սպորտի և հանգստի կազմակերպում:
- Ազգաբնակչության փոստային ծառայությունների ապահովում:
- Գործարար միջավայրի բարելավում:
- Նախադարձական կրթության հիմնադրում:

Աշխատունակներ 274 127 139

Թոշակառուներ 10 3 7

Հաշմանդամներ 7 3 4

Միակողմանի ծնողազուրկ 3 2 1

Արցախյան ազատամարտիկ /վիրավոր/ 7 7

Փարոսում գրանցվածներ 20

Գրանցված ընտրողներ 276

Ընտանիքների թիվը 76

Զբաղվածներ 42

Բնակարանի կարիքավոր ընտանիքներ 7

Բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր ընտանիքներ 10

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանվել է ՀՀ կառավարության 14.03.1997թ-ի թիվ 51 որոշմամբ: Համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների վիճակի գնահատումը:

Հ/հ	Կառույց	Հասցեն	Կառուցման տարեթիվ	Չափի միավորը	Մակերես	Ընդհանուր վիճակի գնահատական	Նորոգման / վերականգնման / փոխարինման կարիք
5.	Գերեզմանոց		1989	հա	3.0	անբավարար	Ցանկապատի կառուցում
6.	Հուշարձան պատերազմում զոհվածների		1994	հա	0.5	լավ	-
7.	Խմելու ջրի ջրագիծ		1997	կմ	4.5	բավարար	Պարբերական վերանորոգումներ
8.	Ոռոգման ջրի ցանց			կմ	20	անբավարար	Վերանորոգման

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն – 8474.6 դրամ, որից սեփական եկամուտների բյուջեն կազմում է 2538.7 դրամ, այսինքն ընդհանուր բյուջեի 3.3%

- Պարտիզակ համայնքի ինքնակառավարման մարմինները

Համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը -5

Համայնքի ավագանու անդամները – 5

- Դպրոցական հաստատություն - 1

<<Պարտիզակի Ահարոնի անվան միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ:
Նախատեսված է 100 հոգու համար:

Աշխատակիցների թվաքանակը – 24

Աշակերտների թվաքանակը – 66 աշակերտ

- Առողջապահական հաստատություն – 1

<<Պարտիզակի բուժման կաբարցական կետ>> ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը – 1

Ընտանեական նպաստների համակարգում գրանցված են – 20 ընտանիքներ

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՉ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքի տարածքում գործում են համայնքի անհատ ձեռներեցների կողմից շահագործվում են 2 խանութներ: Համայնքում գործում է <<բուժման արձական կետ>>:

- ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքը չունի գլխավոր հատակագիծ, որի պատճառը ֆինանսական միջոցների բացակայությունն է:

Կենցաղային աղբի կուտակման համար համայնքից մոտ 3 կմ հեռավորության վրա առանձնացված է տարածք, որտեղ տեղափոխվում է համայնքի աղբը, որը հավաքվում է ամսական չորս անգամ:

- ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Համայնքի վարչական տարածքը
Բնակավայրի տարածքը

3279.93 հա, որից՝
26.81 հա

այդ թվում՝ կառուցապատվածը	21.0 հա
Վարելահողեր	203.40 հա
Արոտավայր	600.47
Հատուկ նշանակության	2426.54 հա
Մեկ հողաբաժնի չափը՝	0.12 հա
Դպրոց	1.0 հա
Հուշարձան	0.5 հա
Գերեզմանոց	3.0 հա
Հատուկ պահպանվող	3.83 հա

Վարձակալությամբ է տրված մոտ 40 հա վարելահող և 15 հա արդյունաբերական նշանակության:

- **ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Ներհամայնքային ճանապարհները հիմնականում գրունտային են /մի մասը ասվալտ/ որոնց ընդհանուր երկարությունը մոտ 2 կմ է: Դաշտային ճանապարհները հողային են, որոնց վիճակը բավարար չէ:

- **ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Համայնքի տարածքում գործում են անհատ ձեռներեցների պատկանող 2 խանութներ, որոնք հիմնականում փոքր խանութներ են և զբաղվում են խառը ապրանքների /սնունդ, հագուստ, տնտեսական ապրանքներ և այլն/ վաճառքով: Համայնքում գործող գրանցված ծառայություններ /վարսավիրանոց, կոշկակարանոց և այլն/ չկան: Ցանկալի է, որ համայնքը ունենա վերոհիշյալ ծառայություններ:

- **ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ**

Համայնքային կարևորագույն հարցերի լուծումը իրականացվում է ավագանու միջոցով բնակչության շրջանում իրականացվող հարցազրույցների և հանդիպումների ընթացքում արված առաջարկությունների հիման վրա: Առավել ծավալուն և կարևորագույն հարցերի լուծման համար գումարվում են համայնքային ժողովներ:

Հանրային լսումների և քննարկումների արդյունքում է ընդունվել 2017թվականի բյուջեն:

- **ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

Համայնքում ռիսկային է համարվում տարերային աղետները /կարկուտ, ուժեղ քամիներ, ձնաբքեր, ցրտահարություններ, երաշտներ և այլն/:

- ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ, ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՊԱՌՄԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԸ :

Բուսաբուծության բնագավառում հիմնական արտադրանքը հացահատիկային կուլտուրաների ցորենն է ու գարին: Համապատասխան տեխնիկա չունենալու և անհրաժեշտ քանակի ոռոգման ջուր չունենալու պատճառով մեկ հեկտարից ստացվում է 6 ցենտներ հացահատիկ, որը տրամադրվում է որպես անասնակեր:

Անասնապահության բնագավառում գյուղում կա 150 գլուխ կով, որի միջին կաթնատվությունը չի գերազանցում 1200 լիտրը: Մսի և կաթի արտադրությունը հազիվ բավարարում ազգաբնակչության պահանջները: Բնամթերքի և պտղի չնչին ավելցուկով կատարվում է ապրանքափոխանակություն գյուղացին արտաքին շուկա դուրս չի գալիս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- Համայնքի ուժեղ կողմերը
 1. Համայնքում մեծ թիվ են կազմում բարձրագույն կրթություն ունեցողները:
 2. Աշխատատեղեր ստեղծելու նպատակով կարելի է օգտագործել գյուղից 2,5-3 կմ հեռավորության վրա գտնվող քարհանքը:
 3. Խմելաջրի մատակարարումը կենտրոնացված է, և ինքնահոս կերպով ապահովված է ողջ գյուղը:
- Համայնքի թույլ կողմերը
 - ա. Համայնքը չունի անհրաժեշտ քանակությամբ ոռոգման ջուր:
 - բ. Մեծ է բնակարանի կարիք ունեցողների թիվը:
 - գ. Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը:
 - դ. Բարձր է գործազրկության մակարդակը:
 - ե. Գյուղը գազաֆիկացված չէ:
 - զ. Համայնքը չունի անհրաժեշտ քանակությամբ խմելաջուր:

է. Գյուղամիջյան փողոցները անբարեկարգ վիճակում են և բացակայում է լուսավորությունը:

ը. Հողերի ոչ բավարար մշակման և պարբերաբար կրկնվող բնակլիմայական աղետների հետևանքով գյուղացու եկամուտները շատ ցածր են:

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

	Ծրագրի անվանումը	Չափի միավոր	Ծրագրի ծավալը	Ծրագրի արժեքը հազ. դր.	Ծրագրի կատարումը ըստ տարիների					Ծրագրի ֆինանս. աղբյուրը
					2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ	
2	Ներհամայնքային ոռոգման ցանցի վերանորոգում	կմ	2	12000	2000	2000	2000	3000	3000	10% համայնքապետարան պետ. միջոցներ
4	Փողոցների ասֆալտապատում	մ ²	12000	100000	20000	20000	20000	20000	20000	պետ. միջոցներ
5	Դպրոցի հանդիսությունների դահլիճի և հարակից սենյակների վերանորոգում պատուհանների և դռների փոփոխում		դռներ 10մ ² պատուհաններ 40մ ² հարդարման աշխատանքներ	9.000	4.000	5.000	-	-	-	պետ. միջոցներ
8	Տեխնիկայի ձեռքբերում /կոմբայն, տրակտոր, կուլտիվատոր, խոտինձիչ/	միավոր	5	20000	10000	10000	-	-	-	20% համայնքապետարան 80% Ծիգ
9	Կաթի ընդունման և մշակման կետի ստեղծում	հատ	1	20000.0						10% Ա/ձ պետ. միջոցներ
13	Փողոցների գիշերային լուսավորություն	կմ	2	10000	5000	5000				պետ. միջոցներ
14	Խեղաշրի կապտաժների վերանորոգում	հատ	1	1000			1000.0			համայնքապետարան
17	Գազաֆիկացում	կմ	5	74000			74000			պետ. միջոցներ 10% համայնքապետարան

19	Վարչական շենքի կառուցում	հատ	1	35000	20000	15000	-	-	-	պետ. միջոցներ
----	--------------------------	-----	---	-------	-------	-------	---	---	---	---------------

• **Պետության կողմից իրականացվող ծրագրերի ազդեցությունը համայնքի վրա**

ա. Վարչական շենքի կառուցման դեպքում կստեղծվի հարմարավետություն համայնքապետարանի գործունեության համար:

բ. Գազաֆիկացումը վերջնականապես կլուծի ազգաբնակչության վառելիքի և կոմունալ - կենցաղային բարենպաստ պայմաններ կստեղծի:

գ. Փողոցների գիշերային լուսավորումը մատչելի կդարձնի ազգաբնակչության շարժը և բնակավայրի տեսքի փոփոխություն կառաջացնի:

դ. Փողոցների ասֆալտապատումը երթևեկելի կդարձնի բնակավայրի փողոցները հատկապես ձմեռային շրջանում:

ե. Կաթի ընդունման և մշակման կետի ստեղծումը կնպաստի նոր աշխատատեղերի բացմանը

• **Պետության կողմից իրականացվող ծրագրերի ազդեցությունը համայնքի վրա**

ա. Վարչական շենքի կառուցման դեպքում կստեղծվի հարմարավետություն համայնքապետարանի գործունեության համար:

բ. Գազաֆիկացումը վերջնականապես կլուծի ազգաբնակչության վառելիքի և կոմունալ - կենցաղային բարենպաստ պայմաններ կստեղծի:

գ. Փողոցների գիշերային լուսավորումը մատչելի կդարձնի ազգաբնակչության շարժը և բնակավայրի տեսքի փոփոխություն կառաջացնի:

դ. Փողոցների ասֆալտապատումը երթևեկելի կդարձնի բնակավայրի փողոցները հատկապես

ե. Կաթի ընդունման և մշակման կետի ստեղծումը կնպաստի նոր աշխատատեղերի բացմանը ձմեռային շրջանում:

Պարտիզակ համայնքի սույն զարգացման հնգամյա ծրագիրը իրականացվելու է համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների, աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների և համայնքի բնակիչների կողմից: ՀՀԾ-ի իրականացման ընդհանուր պատասխանատուն համայնքի ղեկավարն է: Յուրաքանչյուր ոլորտային ծրագրի համար կնշանակվեն պատասխանատուներ, որոնք պարբերաբար հաշվետվություններ կներկայացնեն համայնքի ղեկավարին: Յուրաքանչյուր տարվա ավարտին համայնքի աշխատակազմի ղեկավարը ոլորտային ծրագրերի ղեկավարների հաշվետվությունների հիման վրա կպատրաստի ՀՀԾ-ի կատարման տարեկան հաշվետվությունը:

Ծրագրերի մշտադիտարկման (մոնիտորինգի) և վերահսկման համար կձևավորվեն մշտադիտարկման և վերահսկման խմբեր, որոնցում կնդգրկվեն համայնքի ավագանու անդամներ, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինը, համայնքի աշխատակազմի և համայնքային ենթակայության կազմակերպությունների ներկայացուցիչներ և համայնքի բնակիչներ: Այդ ծրագրերի իրականացման անմիջական հսկողությունը կիրականացնի համայնքի ղեկավարը:

ՀՀԾ-ի վերահսկողությունը կիրականացնի համայնքի ավագանին ձևավորելով ժամանակավոր հանձնաժողով, որի կազմում կնդգրկվեն նաև քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ներկայացուցիչներ:

Սույն ՀՀԾ-ի իրականացման տարեկան հաշվետվությունները համայնքի ղեկավարը կներկայացնի հանրային քննարկումների, այնուհետ համայնքի ավագանու քննարկմանը: Անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուր տարի, ՀՀԾ-ում կկատարվեն փոփոխություններ և լրացումներ: